ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԵԿ ԳԱՆՁԱՓԱՐԻ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանաշնորհման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Սոս Վիրաբի Խաչիկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թաթուլ Մելսիկի Մկրտչյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վիլեն Վիկտորի Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝ ***Երևանի պետական համալսարան***

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 12-ին, ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (0025, ք. Երևան, Նալբանդյան փ. 128) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունվարի 13-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Տ.Ս. Մարտիրոսյան**

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից փուլն առանձնահատուկ է նրանով, որ երկրներն իրենց առաջընթացի ճանապարհին շեշտադրում են հատկապես մարդկային ռեսուրսների՝ որպես գլոբալ զարգացումներին համարժեք մրցունակ տնտեսություն ձևավորողների դերակատարումը՝ արդյունքում ստեղծելով գիտելիքի վրա հիմնված կամ ինովացիոն տնտեսություն: Այս առումով կարևորվում են պետական նախաձեռնությունները, ԲՈՒՀ-երի դերը և ինովացիաների առևտրայնացումը: Տարածքային համաչափ զարգացումը դիտարկվում է որպես ժամանակակից տնտեսական զարգացման առանցքային խնդիր:

Արտասահմանցի (Կուկ, Շիենստոկ, Սվենսոն) և հայ (Ս. Դալլաքյան Ա. Մարգարյան, Հ. Գրիգորյան և այլն) մի շարք հետազոտողներ կարևորություն են տալիս ազգային ինովացիոն համակարգին: Գրեթե բոլոր հեղինակների կողմից նշվում է, որ ազգային ինովացիոն համակարգի արդյունավետ և մրցունակ մոդելների հիմքում տարածքային ինովացիոն համակարգերն են:

Ինովացիոն գործունեության հաջողության գլխավոր նախապայմաններից է ինովացիոն միջավայրին աջակցման պետական քաղաքականությունը, որն իրականացվում է ինովացիոն գործունեությունը կարգավորող իրավական դաշտի՝ օրենսդրական և նորմատիվաիրավական մեխանիզմների ստեղծման ճանապարհով: Միաժամանակ հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ ինովացիոն տնտեսության ձևավորմանը գրեթե ներգրավված չեն մարզերը, և այս ուղղությամբ գոյություն չունի միասնական և համակարգված պետական ինովացիոն քաղաքականություն:

Տարածքային ինովացիոն համակարգի (այսուհետ ՏԻՀ) դերը նշանավորվում է ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական առումով: ՏԻՀ-ը նպաստում է տվյալ տարածաշրջանի մարդկային կապիտալի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և տարածաշրջանի ակտիվ ներգրավմանը լոկալ և միջազգային տնտեսական գործընթացներին: Մի շարք առաջատար երկրներ մեծ ուշադրություն են դարձնում տարածքային ինովացիոն համակարգի զարգացմանը, այն դիտարկելով որպես երկրի տնտեսության հավասարաչափ զարգացման, սոցիալ տնտեսական խնդիրների լուծման, մարդկային կապիտալի կուտակման, արտագաղթի ծավալների կրճատման ու ապակենտրոնացման հիմնական միջոցներից մեկը: Տարածքային ինովացիոն համակարգի դերը խիստ կարևոր և կենսական նշանակություն ունի նաև ՀՀ-ի համար: Ունենալով կենտրոնացման բարձր մակարդակ հատկապես մարզային բնակչության շրջանակներում՝ ՏԻՀ-ը

կարող է դիտարկվել վերոնշյալ խնդիրների լավագույն լուծում: Միևնույն ժամանակ, ՏԻՀ ձևավորումը և զարգացումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրից, որտեղ զգալի նշանակություն ունեն երկրի սոցիալ-տնտեսական խնդիրները, մարդկային կապիտալի զարգացումը, տարածքային տնտեսության և գիտելիքահենք տնտեսության զարգացման գործոնները[1]: ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով նախատեսված չեն անհրաժեշտ դրույթներ ՏԻՀ ձևավորման ու զարգացման շրջանակի վերաբերյալ:

Տարածքային ինովացիոն համակարգի կառավարման հիմնախնդիրներին անդրադարձել են մի շարք հեղինակներ, սակայն ՀՀ պետական քաղաքականության շրջանակում այսպիսի ծրագրերի իրականացման մեծ արդյունքներ չեն արձանագրվել, հետևաբար, վերոնշյալ մոտեցումները և խնդիրները դեռևս իրենց ամբողջական լուծումները չեն ստացել, որով էլ պայմանավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը և դրանից բխող խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է վերլուծել ՀՀ տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման, զարգացման և կառավարման հիմնական ուղղությունները՝ հիմնվելով միջազգային փորձի, ՀՀ տնտեսության զարգացման արդի միտումների և տարածքային քաղաքականության առանձնահատկությունների վրա:

Սահմանված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել և ընդհանրացնել ՏԻՀ-երի զարգացման տեսական և մեթոդաբանական հիմքերը,
- ուսումնասիրել միջազգային փորձը՝ ՏԻՀ-երի կառավարման մոդելների համեմատական վերլուծության միջոցով;
- բացահայտել ՀՀ-ում ՏԻՀ-երի ձևավորման հիմնական խոչընդոտներն ու զարգացման գործոնները,
- մշակել և հիմնավորել ՏԻՀ-ի զարգացման ու կառավարման նոր մոտեցումներ՝ հիմնվելով կատարողականի առանցքային ցուցիչների վրա,
- առաջարկել ՏԻՀ զարգացման հնարավորությունների գնահատման համընդհանուր ցուցիչ, հիմնված տարածքային ինովացիաների իրականացման ռեսուրսային հնարավորությունների, ինչպես նաև կազմակերպչահիրավական գործոնների վրա:

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման շրջանակն է, իսկ օբյեկտը՝ տարածքային ինովացիոն համակարգի զարգացման ու կառավարման առանձնահատկությունները ՀՀ-ում:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման, զարգացման և կառավարման ուղղությամբ նոր մոտեցումների մշակումն է, որն արտահայտվում է հետևյալ դրույթներով.

- առաջարկվել է ՏԻՀ-ի կառավարման ինստիտուցիոնալ մոտեցում, հաշվի առնելով տարածաշրջանային ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորման միջազգային առաջավոր փորձի, պետական և մասնավոր հատվածի ներդաշնակ համագործակցության, ինչպես նաև տարածքային ինովացիոն գործունեության խթանման նպատակով պետական արդյունավետ քաղաքականության միջամտությունը:
- ՏԻՀ զարգացման գնահատման համար մշակվել է *Տարածքային ինովացիոն ներուժի բազմաչափ գնահատման ընդլայնված մոդել,* որը տնտեսավարման ավանդական գործոններից բացի (աշխատուժ, կապիտալ) ներառում է ՏԻՀ-ի առանցքային բաղադրիչներ՝ գիտահետազոտական ներդրումներ, մարդկային կապիտալ, ինովացիոն ենթակառուցվածքներ, պետական աջակցություն և տեխնոլոգիական առաջընթաց, հնարավորություն ընձեռնելով հիմնավորելու տարածքային ինովացիոն ռազմավարական կառավարման նպատակահարմարությունը,
- մշակվել է ՏԻՀ զարգացման հնարավորությունների համընդհանուր ցուցիչ, հիմնված տարածքային ինովացիաների իրականացման ռեսուրսային հնարավորությունների, ինչպես նաև կազմակերպչահիրավական գործոնների վրա, գնահատելու համար կառավարչական գործառույթների ընթացքը տարածքային ինովացիաների գեներացման, ներդրման կազմակերպման ու վերահսկողության, ինչպես նաև սպառման խթանման շղթայում,
- առաջարկվել է տարածքային ինովացիոն համակարգի կառավարում՝ կատարողականի առանցքային ցուցիչներով, որը հնարավորություն է ընձեռում մի կողմից ապահովելու ՏԻՀ-ի գործունեության աջակցող գործառույթների արդյունքային պարբերական չափելիություն, մյուս կողմից, դրա հիման վրա կայացնելու տարածքային ինովացիոն գործունեության առաջընթացին նպաստող համապատասխան կառավարչական որոշումներ:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքը: Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական

հիմք են ծառայել հայ և արտասահմանցի տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, տնտեսագիտական դասական և արդի տեսությունների հիմնադրույթները, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները, Համաշխարհային բանկի, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, ԵՄ և ՏՀԶԿ վիճակագրական ցուցանիշները, ինչպես նաև տարբեր փորձագետների գնահատականներ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և գիտական արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, ինչպես նաև ներկայացվել են մի շարք տեղական և միջազգային գիտաժողովներում՝ գիտական հրապարակումների տեսքով:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթները ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված 12 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատության ընդհանուր ծավալը կազմում է 145 էջ՝ առանց գրականության ցանկի և հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման սոցիալ-տնտեսական նախադրյալները»** *գլխում,* քննարկվում են տարածքային ինովացիոն համակարգի (ՏԻՀ) բաղադրիչներն ու դրանց չափման մոտեցումները

Տարածքային ինովացիոն համակարգը լայն տարածում գտավ 1990-ական թվականներից: Ազգային ինովացիոն համակարգն այլևս չէր բավարարում ժամանակակից տնտեսության պահանջները և խնդիր էր դրված գտնել առավել արդյունավետ մոդել: Նոր տնտեսության պայմաններում տարբեր տարածքներ դրսևորում էին առավել արդյունավետ գործունեություն և դրանցով էր հիմնականում

պայմանավորվում առանձին երկրների տնտեսական ներուժը: Գլոբալացման տեսակետից տարածքային ինովացիոն համակարգն ազգային ինովացիոն համակարգի համար հանդիսանում է շարժիչ ուժ, որն էլ ապահովում է ազգային ինովացիոն համակարգի մրցունակությունը և դրա դիրքը գլոբալ ինովացիոն համակարգում:

Հիմք ընդունելով ՏԻՀ մեխանիզմների գործունեության առանձնահատկությունները, բնութագրերը և հիմնական գործոնները, առաջարկվել տեսակետից տարածքային ինովացիոն համակարգն ընդլայնված մոդել, որը ներառում է ՏԻՀ-ի առանցքային բաղադրիչները՝ կապիտալ, աշխատուժ, գիտահետազոտական ներդրումներ, մարդկային կապիտալ, ինովացիոն ենթակառուցվածքներ, պետական աջակցություն և տեխնոլոգիական գործոն: Մոդելի կառուցվածքը հետևյալն է՝

$$Y=AK^{\alpha}L^{\beta}R^{\gamma}H^{\delta}I^{\theta}P^{\eta}T^{\lambda}$$

Հաշվի առնելով, որ ինովացիոն տնտեսությունը դինամիկ զարգացող համակարգ է, որի վրա կարող են ազդել ամենատարբեր գործոններ՝ շուկայական փոփոխություններից մինչև տեխնոլոգիական և գլոբալ քաղաքական զարգացումներ, առաջարկվող մոդելի մեջ ներառել են նաև այն ազդեցությունները, որոնք դուրս են մնում մոդելի հիմնական գործոններից, սակայն ՀՀ տնտեսության համատեքստում կարող են էականորեն փոխել տնտեսական արդյունքը: Այդ նպատակով մոդելի ընդլայնված տարբերակում ներառվել է նաև պատահական գործոնը՝ e^{ε}\varepsilon/, որը ներառում է շուկայական չկանխատեսված տատանումները, տնտեսական ճգնաժամերը, տեխնոլոգիական նորամուծությունները, այլ արտակարգ կամ նոր իրավիճակները:

Արդյունքում առաջարկվում է մոդելի ամբողջական տեսքը՝

$$Y = AK^{\alpha}L^{\beta}R^{\gamma}H^{\delta}I^{\theta}P^{\eta}T^{\lambda}e^{\varepsilon}$$

որտեղ՝ փոփոխական գործոնը թույլ է տալիս մոդելին մնալ ճկուն և համապատասխանել իրական տնտեսական գործընթացների փոփոխություններին:

Հեղինակային մոդելը նպատակ ունի՝

- **գնահատել ՏԻՀ կառավարման արդյունավետությունը**,
- **հանդիսանալ հիմք կառավարչական որոշումների ընդունման համար**՝ ըստ գործոնների առաջնահերթության,

Ելնելով առաջարկվող մոդելի կիրառման արդյունավետությունից և օգտակարությունից, իրականացվել է մոդելի փորձնական կիրառության գնահատում[2]:

ՏԻՀ-ի զարգացման հիմնախնդիրների վերլուծության շրջանակում 2018–2023 թվականների հավաքագրված ցուցանիշների հիման վրա կառուցված ՏԻԳ մոդելը հնարավորություն է տվել քանակական գնահատման միջոցով բացահայտել տնտեսական աճի խթանիչ և սահմանափակող գործոնները: Ստացված արդյունքների վրա իրականացնել արդյունավետ քաղաքականության մշակում և կառավարում: Մոդելի կառուցման համար կիրառվել են բնական լոգարիթմներով վերափոխված տվյալներ՝ ապահովելով մոդելի գծայնացում և գործակիցների համեմատելիություն: Ըստ այդմ մոդելի վերջնական թվային տեսքը հետևյալն է՝

$$\mathbf{Y = AK^{0.7068}L^{1.6631}R^{0.0931}H^{0.2402}I^{-0.3880}P^{-0.6075}T^{0.0462}e^{\varepsilon}}$$

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ աշխատուժը հանդիսանում է տնտեսության աճի ամենաազդեցիկ գործոնը: Աշխատուժի գործակիցը (β=1,6631) վկայում է, որ տնտեսապես ակտիվ բնակչության ընդամենը 1%-անոց աճը ՀՆԱ-ն կարող է բարձրացնել ավելի քան 1,5%-ով:

Մյուս կողմից, կապիտալ ներդրումները նույնպես կարևոր դեր են խաղում: Գործակիցը (α=0.7068) վկայում է կապիտալի ներդրումների շարունակական աճի և դրա դրական ազդեցության մասին ՀՆԱ-ի նկատմամբ: Որակավորված աշխատուժի գործակիցը (δ=0.2402) վերահաստատում է կրթության և մասնագիտական պատրաստվածության կարևոր նշանակությունը ՏԻՀ-ի համար: Գիտահետազոտական գործունեության ներդրումային գործակիցը (γ=0.0931), ունի դրական, բայց համեմատաբար թույլ ազդեցություն, ինչը ՏԻՀ զարգացման տեսանկյունից հանդիսանում է բացասական գործոն: Ինովացիոն ենթակառուցվածքների գործակիցը (θ=-0.3880) բացասական է: Բացասական գործակիցը վկայում է, որ տեխնոպարկերի, ինկուբատորների և նման կառույցների ներկայությունը դեռևս չի վերածվել արդյունավետ տնտեսական ներուժի: Պետական աջակցության գործակիցը (η=-0.6075) ևս բացասական է, ինչը կարող է պայմանավորված լինել ոչ արդյունավետ բյուջետային ծրագրերի, ավելորդ կենտրոնացվածության կամ ներդրումների ոչ նպատակային բաշխման հետ: Տեխնոլոգիական գործոնը (λ=0.0462), չնայած դրական ուղղվածությանը, դեռևս թույլ ազդեցություն է ունենում ՀՆԱ-ի վրա:

---

[2] Саратикян Нарек, «Пути совершенствования управления региональной инновационной системой: применение модели Кобба-Дугласа», «Регион и мир», 2025, №3 232-237.

Հետագա օգտագործման և ՏԻՀ արդյունավետության բարձրացման համար նպատակահարմար կլինի կատարել մարզային մակարդակով մանրակրկիտ տվյալների հավաքագրում՝ մոդելի էկոնոմետրիկ ճշգրտության բարձրացման և գործոնների լրացուցիչ ընդլայնման նպատակով:

Փորձնական վերլուծությունը հաստատեց, որ ամենաազդեցիկ գործոններն են՝ աշխատուժի ներուժը, կապիտալային ներդրումները և մարդկային կապիտալը: Միևնույն ժամանակ մոդելը բացահայտեց նաև թույլ և բացասական ազդեցությամբ գործոններ՝ ինչպես պետական աջակցությունը, այնպես էլ ինովացիոն ենթակառուցվածքները, ինչը հուշում է քաղաքականության վերակառուցման անհրաժեշտության մասին:

Ուշադրության երկրորդ՝ «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» գլխում, մեկնաբանվում են ՏԻՀ-երի ձևավորման մարտահրավերները ՀՀ-ում:

Համադրելով ՏԻՀ-ի միջազգային մոդելները և դրանց ձևավորման պատմական փորձը, կարելի է առանձնացնել մի շարք հիմնարար տարրեր և մեխանիզմներ, որոնք ապահովում են ՏԻՀ-ի կայուն զարգացումը: Դրանք են՝

1. Ինովացիոն միջավայր և ենթակառուցվածքներ:

Ինովացիոն միջավայրը և ենթակառուցվածքները հանդիսանում են ՏԻՀ-ի զարգացման հիմքը, որոնք ներառում են պետության ինովացիոն ներուժի գնահատումը, գիտական և տեխնոլոգիական կենտրոնների ստեղծումը, ինչպես նաև տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորումը: Այս բաղադրիչը կարևոր է, քանի որ առանց համապատասխան ենթակառուցվածքների և պետական աջակցվող ինովացիոն հարթակների՝ ՏԻՀ-ը չի կարող գործել արդյունավետ կերպով:

2. Մարդկային կապիտալ և գիտակրթական ներուժ:

ՏԻՀ-ի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ունենալ բարձրակարգ մարդկային կապիտալ, որը կարող է ապահովել նորարարական գործունեության շարունակական զարգացում: Սա ներառում է կրթական համակարգի արդիականացումը, մասնագիտական վերապատրաստումների խթանումը, ինչպես նաև գիտական հետազոտությունների ակտիվ ներգրավումը ինովացիոն գործընթացներում: Այս տարրը հնարավորություն է տալիս ապահովել տեղական ինովացիոն զարգացման հիմքերը:

3. Ֆինանսավորում և ներդրումներ:

ՏԻՀ-ի հաջող զարգացման համար անհրաժեշտ է բազմաբնույթ ֆինանսավորման համակարգ, որը կներառի պետական ներդրումներ, վենչուրային կապիտալ, միջազգային ֆինանսավորում և մասնավոր հատվածի ներդրումներ: Ֆինանսավորման արդյունավետ մոդելները կարող են ապահովել նորարարական

ձեռնարկությունների կայուն աճը, գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորումը և տեխնոլոգիաների առևտրայնացումը:

4. Տեխնոլոգիական զարգացում և թվային փոխակերպում:

Տեխնոլոգիաների զարգացումը ՏԻՀ-ի հաջողության կարևոր նախապայմաններից է, որը ներառում է SS ոլորտի զարգացումը, արհեստական բանականության և թվայնացման կիրառումը, արդյունաբերության թվային վերափոխումը և տեխնոլոգիական լուծումների ինտեգրումը ձեռնարկությունների գործունեության մեջ: Այս տարրը կարևոր է, քանի որ տեխնոլոգիական առաջընթացն ապահովում է ՏԻՀ-ի մրցունակությունն ու երկարաժամկետ ազդեցությունը տնտեսության վրա:

5. Մասնավոր հատվածի ներգրավվածություն և շուկայի զարգացում:

ՏԻՀ-ի հաջողությունը մեծապես կախված է նաև մասնավոր հատվածի մասնակցությունից, ինչը ենթադրում է նորարարական ձեռնարկությունների խթանում, բիզնես միջավայրի բարելավում, տեղական և միջազգային շուկաների ընդլայնում: Եթե մասնավոր հատվածը լիարժեք ներգրավված չէ ՏԻՀ-ի զարգացման գործընթացում, ապա ինովացիոն միջավայրի կայունությունը կարող է վտանգվել:

Նպատակ ունենալով իրականացնել ՀՀ տնտեսության վրա ինովացիոն գործոնների ազդեցության ճիշտ և փաստարկված գնահատում, ինչպես նաև բացահայտել այն հիմնական ուղղությունները, որոնք էականորեն ազդում են ՀՀ ինովացիոն տնտեսության վրա, իրականացվել է էկոնոմետրիկ մոդելավորում, որի նպատակն է չափել երկրների մրցունակության և տնտեսական աճի վրա գիտատեխնոլոգիական և ինովացիոն զարգացման ազդեցությունը: Որպես արդյունքային հատկանիշներ դիտարկվել են՝

Y1 – տնտեսական աճ (%),

Y2 – համաշխարհային կայուն մրցունակության համաթիվ,

իսկ որպես գործոններ ընտրվել են հետևյալ ցուցանիշները.

X1 – ինստիտուցիոնալ միջավայր,

X2 –հետազոտությունների և մշակման նպատակով կատարված համախառն ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, %,

X3 – գիտատար զբաղվածությունը, %,

X4 – համալսարան-արդյունաբերություն նորարարական համագործակցությունը,

X5 – աշխատանքի արտադրողականության աճը, %,

X6 – արտադրության և արտահանման բարդությունը:

Հետազոտության մեջ ներառվել է 97 երկիր, որոնք խմբավորվել են ըստ Գլոբալ ինովացիոն ինդեքսի արժեքի՝ առանձնացնելով հետևյալ խմբերը.

1. մինչև 25՝ ինովացիոն զարգացման ցածր մակարդակ (26 երկիր),

2. 25-40՝ ինովացիոն զարգացման միջին մակարդակ (42 երկիր),
3. 40 և բարձր՝ ինովացիոն զարգացման բարձր մակարդակ (29 երկիր):

Այնուհետև, խմբերից յուրաքանչյուրի համար իրականացվել է բազմաչափ մոդելավորում՝ երկրների տնտեսական աճի, մրցունակության և ինովացիոն զարգացման բնութագրիչների կապը ներկայացնելով հետևյալ էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ.

$$Y_1 = a_0 + \sum_{i=1}^{k} a_i X_i + \varepsilon_1,$$
$$Y_2 = b_0 + \sum_{i=1}^{k} b_i X_i + \varepsilon_2,$$

որտեղ՝

a_0-ն և b_0-ն էկոնոմետրիկ մոդելների ազատ անդամներն են,

X_i-ն՝ ինովացիոն զարգացումը բնութագրող i-րդ գործոնը,

a_i -ն և b_i -ն՝ մոդելներից յուրաքանչյուրում i-րդ գործոնի ռեգրեսիայի գործակիցները,

ε_1-ը և ε_2-ը՝ մոդելներից յուրաքանչյուրի պատահական սխալը:

Քայլային ռեգրեսիոն վերլուծության գործիքակազմի կիրառմամբ տարբեր երկրների համար ստացվել են հավասարումներ, որոնք բացահայտել են տվյալ երկրների հնարավորությունները, քաղաքականության անհրաժեշտ փոփոխությունները[3]:

$$Y_1 = 98.36 + 0.09X_5,$$
$$Y_2 = 38.27 + 0.23X_2 + 0.13X_3:$$

Ինովացիոն զարգացման միջին մակարդակով աչքի ընկնող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, որոնք ՀՆՀ վարկանշային աղյուսակում զբաղեցնում են 36-80-րդ հորիզոնականներ, տնտեսական աճի նախադրյալ է աշխատանքի արտադրողականությունը, իսկ մրցունակության վրա առավելապես ինովացիոն արդյունքի (output) առանցքային բնութագրիչները, այդ թվում՝ ՀՆԱ-ում հետազոտությունների և մշակման նպատակով կատարված համախառն ծախսերի մասնաբաժնի, գիտատար զբաղվածության մակարդակի ցուցանիշները: Ընդ որում, ստացված ռեգրեսիոն մոդելի շրջանակներում տեղադրելով Հայաստանի համապատասխան ցուցանիշները՝ կստանանք մրցունակության ցուցիչի 44.99 արժեքը, մինչդեռ Հայաստանի համար Համաշխարհային կայուն մրցունակության համաթվի փաստացի արժեքը կազմում է 43.77, ինչը վկայում է առկա հնարավորությունների յուրացման բարձր մակարդակի մասին: Սա նշանակում է, որ Հայաստանում ինովացիաների ոլորտում միջոցների ներդրման, գիտական ներուժի զարգացման և իրացման միջոցով կարելի է ապահովել տնտեսական մրցունակության որակապես նոր մակարդակ:

---

[3] Saratikyan Narek, «Challenges Of Forming A Regional Innovation System In The RA», Economics, Finance and Accounting (SI-1), 188. 2025, p 154-165.

Այսպիսով, կառուցված ռեգրեսիոն մոդելները հնարավորություն են տալիս բացահայտելու ինովացիոն ներուժի օգտագործման աստիճանն առանձին երկրներում, բացահայտելու երկրների համասեռ խմբերի քանակական բնութագրիչները, ճշգրտելու գերակայությունները, ինչպես նաև հիմնավորելու առանձին ուղղություններում քաղաքականության խորացման անհրաժեշտությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Տարածքային ինովացիոն համակարգի կառավարման բարելավման ուղիները ՀՀ-ում» գլխում, վերլուծվել են ՏԻՀ-երի ռազմավարական կառավարման հնարավորությունները:

Տարածքային ինովացիոն համակարգի կառավարման գործընթացը պահանջում է գործողությունների արդյունքային չափելիություն: Ընդ որում, կառավարման նման արդյունքները դրսևորվում են նպատակադրման, կազմակերպման, վերահսկողության և շահադրդման գործառույթներում: Հետևաբար, տարածքային ինովացիոն համակարգի զարգացումների նպաստման գծով կառավարչական որոշումները անհրաժեշտ է կայացնել վերոնշյալ գործառույթների կտրվածքով: Մյուս կողմից, կարևորվում է նաև տնտեսության ինովացիոն համակարգերի ցուցիչների մշակումն ու փոխկապակցումը վերոնշյալ գործառույթների հետ, որով հնարավորություն է ստեղծվում ապահովելու զարգացման արդյունքային չափելիությունը, մոնիտորինգը և դրանց հիման վրա կայացնելու առաջընթացի համապատասխան որոշումներ: Այս առումով, տարածքային ինովացիոն համակարգերի կառավարման տեսանկյունից նպատակահարմար է համարել կատարողականի առանցքային ցուցիչների կիրառումը (KPI):

Առաջարկվել է ՏԻՀ կառավարման առանցքային ցուցիչների հիերարխիայի կառուցումը:



Գծապատկեր 1. **ՏԻՀ կառավարման առաջարկվող առանցքային ցուցիչների հիերարխիան**[4]

[4] Կազմել է ատենախոսը:

a1 – համայնքային ֆինանսավորում,
a2 –ֆինանսավորում՝ բիզնեսից,
a3- վենչուրային ֆոնդերից ֆինանսավորում,
a4- ցածր տոկոսներով վարկային ռեսուրսների ներգրավում,
b1- նորամուծական տեխնոլոգիաներին հասանելիություն,
b2-ինովացիաների առևտրայնացման մեխանիզմների առկայություն,
b3 - տարածաշրջանային նորամուծությունների պատենտավորում,
b4 – թվային փոխակերպումներ և հաշվետվողականություն,
c1 -տարածքային զարգացման օրենսդրության վերանայման նախաձեռնություններ,
c2 - տարածքային ինքնակառավարման բյուջետավորման կարգի վերանայումներ,
c3 -ՏԻՀ-երի գործունեության հարկային արտոնությունների տրամադրումներ,
d1 – ինովացիոն շուկաներին թիրախավորված մարքեթինգային նախաձեռնումներ,
d2 – ստարտափ ինկուբատորների ձևավորումներ,
d3 – համալսարանական հենակետերի հիմնադրումներ,
d4 – տեխնոպարկերի հիմնադրումներ:

ՀՀ Տավուշի մարզում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում ուրվագծվել է տարածքային ինովացիոն համակարգ և դրա հիման կատարողականի ցուցիչներով ՏԻՀ-երի գործունեության գնահատման տեղեկատվական համակարգի ձևավորման շրջանակ (տես աղյուսակ 1), որով նախ և առաջ արձանագրվում են ՏԻՀ-ի զարգացման առանցքային ցուցիչների նպատակադրումները, և այնուհետև՝ դրանց ձեռքբերումների փաստացի արդյունքներով հաշվարկվում են առանցքային ցուցիչների կատարողականի աստիճանները: Ընդ որում, ՏԻՀ-ի գործունեությանն առնչվող ցուցիչներն խմբավորվել են ըստ ռեսուրսային և կազմակերպաիրավական խմբերի, և հաջորդիվ միջին թվաբանականով որոշելու յուրաքանչյուր խմբի գծով ԿԱՑ-ի ենթացուցիչը:

Աղյուսակ 1 **Առանցքային ցուցիչներով տարածքային ինովացիոն համակարգի կառավարչական տարեկան գնահատումը ՀՀ Տավուշի մարզում՝ 2024 թվականին**[5]

Կառավար-չական ցուցիչներ	ՏԻՀ զարգացման առանցքային ցուցիչների նպատակադրումներ	Փաստացի առանցքային ցուցիչներ	Ցուցիչների կատա-րողական
Ֆինանսական			
I_{a_1}	120 մլն դրամ	118 մլն դրամ	0,983
I_{a_2}	25 մլն դրամ	21 մլն դրամ	0,840
I_{a_3}	40 մլն դրամ	37 մլն դրամ	0,925
I_{a_4}	245 մլն դրամ	248 մլն դրամ	1,101
Ենթացուցիչ Ia			0,9622
Ոչ ֆինանսական			
b_1	95%	88%	0,926
b_2	82%	79%	0,963
b_3	4 հատ	3 հատ	0,750
b_4	97%	86%	0,887
Ենթացուցիչ I_b			0,8815
Իրավական			
c_1	2 անգամ	1 անգամ	0,5
c_2	1 անգամ	1 անգամ	1.0
c_3	1 անգամ	Չի իրականացվել	0
Ենթացուցիչ Ic			0,5
Կազմա-կերպչական			
d_1	5 անգամ	3 անգամ	0,6
d_2	2 ստարթափ	1 ստարթափ	0,5
d_3	1 հենակետ	1 հենակետ	1,0
d_4	1 տեխնոպարկ	1 տեխնոպարկ	1,0
Ենթացուցիչ Id			0,775
ՏԻՀ զարգացման հնարավորությունների համընդհանուր ցուցիչ			0,7797

[5]Կազմվել է ատենախոսի կողմից՝ Տավուշի մարզում կատարված ուսումնասիրությունների հիման վրա:

Կատարողականի ցուցիչներով ապահովելով ՏԻՀ-երի ձևավորման և զարգացման գնահատման տեղեկատվական համակարգի ձևավորման շրջանակ, հնարավորություն է ստեղծվում հաշվարկելու համընդհանուր առանցքային ցուցիչ (**Ip**),

$$Ip = \sum(Ia + I_b + Ic + I_d)/n$$

որտեղ՝

Ip – ՏԻՀ զարգացման հնարավորությունների համընդհանուր ցուցիչ,

Ia, I_b, Ic, I_d – համապատասխանաբար ֆինանսական, ոչ ֆինանսական, իրավական, կազմակերպչական ենթացուցիչներ,

n- ենթացուցիչների քանակը:

Հետևաբար, կառավարման առանձին գործառույթների միջև առանցքային կատարողականի գնահատման ենթացուցիչների բաշխումը տեղեկատվական հնարավորություններ է ձևավորում՝ ընդունելու կառավարչական որոշումներ՝ տարածքային ինովացիոն համակարգի զարգացման ռիսկերը կանխարգելելու կամ մեղմելու ուղղությամբ (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2 **ՏԻՀ կառավարչական գործառույթների առաջարկվող պարբերաշրջանը**[6]

[6] Կազմվել է ատենախոսի կողմից:

Այսպիսով, կատարողականի առանցքային ցուցիչներով ՏԻՀ-երի կառավարչական գործառույթները առաջարկում ենք իրականացնել դինամիկ մոտեցմամբ, կիրառելով փուլային պարբերաշրջան (տես գծապատկեր 3.3.5):

Առաջին փուլ. ՏԻՀ-երի զարգացման նպատակադրումների ներուժի բնութագրում ԿԱՑ-երով, արձանագրելով տարածքային ինովացիաների գեներացման և իրացման ռեսուրսային ու կազմակերպչական կարողությունների հասանելիության թիրախները:

Երկրորդ փուլ. ՏԻՀ գործունեությանը նպաստող գործոնների գծով ենթացուցիչների սահմանում և դրանց հիման վրա ՏԻՀ զարգացման հնարավորությունների համընդհանուր ցուցչի գնահատում:

Երրորդ փուլ. ՏԻՀ-երի զարգացման գծով սահմանված կատարողականի առանցքային ցուցիչների փոփոխման մշտադիտարկում և ինովացիաների ներդրման գործոնային խոչընդոտների բացահայտում:

Չորրորդ փուլ. ՏԻՀ-երի զարգացման ռիսկերի գնահատում և ինովացիոն գործունեության հնարավորությունների իրացման ռիսկայնության մեղմում:

Հինգերորդ փուլ. ՏԻՀ-երի գործունեության մրցակցային պայմաններից ելնելով՝ սահմանված կատարողականի ցուցիչների պարբերաբար վերանայում և առաջընթացին ուղղված համապատասխան կառավարչական որոշումների ընդունում:

Հետևաբար, տարածաշրջանային ինովացիոն համակարգի կառավարումը կատարողականի առանցքային ցուցիչներով հնարավորություն է ընձեռնում մի կողմից ապահովելու ՏԻՀ-երի գործունեության աջակցող գործառույթների արդյունքային պարբերական չափելիություն, մյուս կողմից, դրա հիման վրա կայացնելու մարզային ինովացիոն գործունեության առաջընթացին նպաստող համապատասխան կառավարչական որոշումներ:

Ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում, հաշվի առնելով ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունները, ուսումնասիրություններն ու վերլուծությունները, հանգել ենք հետևյալ եզրակացությունների և ներկայացրել առաջարկություններ:

1. Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է նրանով, որ զարգացման տարբեր փուլերում գտնվող մի շարք երկրներ, ընդօրինակում են առաջատար երկրների փորձը և զարգացման գլխավոր շեշտը դնում են մարդկային ռեսուրսների վրա՝ ստեղծելով ինովացիոն տնտեսություն, որն էլ լայն իմաստով, հանդիսանում է գիտելիքի վրա հիմնված տնտեսություն: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն է ստանում ինովացիոն տնտեսություն

ունեցող երկրների հաջողված փորձի ուսումնասիրությունը և դրա տեղայնացումը ՀՀ-ում, ինչը հնարավորություն կընձեռի ստեղծել ամուր և զարգացող տնտեսություն, որն ունակ կլինի մրցել նոր տնտեսական համակարգում: Չունենալով հարուստ բնական պաշարներ՝ ՀՀ-ն իր տնտեսական զարգացումը կարող է ապահովել ի հաշիվ ինովացիոն համակարգերի, որտեղ կարող է առանց սահմանափակումների օգտագործել իր գիտական ներուժը, ինչպես նաև նպաստել տարածքային տնտեսության զարգացմանը: Սակայն մյուս կողմից, ՀՀ-ում դեռևս չի ձևավորվել ՏԻՀ-կառավարման հայեցակարգ, որի արդյունքում տարածքային ինովացիոն գործընթացների նպատակադրումները և խթանիչ գործառույթները թերևս չեն համակարգվում:

2. Տարածքային մակարդակում նորարարության ոլորտի զարգացումն ուղղակիորեն փոխկապակցված է տվյալ տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման հետ, որը ներառում է տարածքային համախառն արտադրանքը, արտադրողական ուժերն ու ռեսուրսները, տարածքի մրցունակությունը, ներդրումային գրավչությունը, բիզնես ոլորտի ակտիվությունը և այլ գործոններ: Մրցակցային առավելություն և ներուժ ունենալու դեպքում տարածքային միավորները հզորանում են, ընդլայնում ներքին շուկան, խթանում են փոքր և միջին բիզնեսը, ինչպես նաև նպաստում են երիտասարդ մասնագետների մասնագիտական աճին: Հետևաբար, ազգային ինովացիոն համակարգերից տարածքային ինովացիոն համակարգերի տարբերակելու անհրաժեշտություն է առաջացնում, քանի որ վերջինս հանդիսանում է կառավարման առանձին օբյեկտ: Իսկ նման համակարգերը կառավարելիս որոշումներ են կայացվում ինովացիոն ներուժի բարելավումների, ներդրումների աջակցության երաշխիքների, մարզային նորամուծությունների իրագործման կանխատեսելիության գծով, որոնք պահանջում կառավարչական հատուկ մոտեցումներ:

3. Հետազոտության արդյունքում ներկայացվել է ՏԻՀ-ի հեղինակային բնորոշում, համաձայն որի «ՏԻՀ-ը բաց տնտեսական համակարգ է, որը ձևավորվում և զարգանում է բացառապես որևէ տարածքի մարդկային և սոցիալական կապիտալի, ինչպես նաև տվյալ տարածքին բնորոշ առանձնահատկությունների հաշվին՝ կլաստերային տնտեսության պայմաններում ներառելով գիտակրթական համակարգի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի ակտիվ համագործակցությունը՝ ինովացիաների ու գիտության զարգացման միջոցով նպաստելով տարածքային տնտեսության զարգացմանն ու սոցիալական համախմբվածության մակարդակի բարձրացմանը»:

4. ՀՀ-ում տարածքային ինովացիոն համակարգերի կայուն զարգացման ապահովման համար կառավարչական հետևյալ քայլերի իրականացման անհրաժեշտություն է առաջանում.

• նոր ռազմավարության մշակում. համապարփակ ռազմավարություն, որն ամբողջությամբ ներառի ՏԻՀ-ի զարգացման բոլոր բաղադրիչները:

• չափելի արդյունքների ներառում. ՏԻՀ ձևավորման գործընթացում օգտագործվող ցուցանիշների մշակում և կիրառություն:

• թվայնացման և ԱԲ-ի դերի ընդգծում. կրթության, արդյունաբերության և պետական կառավարման մեջ թվային լուծումների և փոխակերպումների հնարավորությունների կիրառման խթանում:

• տարածքային առանձնահատկությունների գնահատում. Մարզային ներուժի գնահատում և տեղական առանձնահատկությունների հիման վրա զարգացման ուղղությունների ձևավորում:

• նոր հնարավորությունների բացահայտում. SS և ինովացիոն ոլորտներում համաշխարհային միտումների ուսումնասիրություն և տեղայնացում:

• աջակցման ծրագրերի մշակում և կիրառում. պետություն-մասնավոր հատված համագործակցության խթանում՝ վենչուրային ներդրումների, կրթական ծրագրերի և հետազոտական նախագծերի միջոցով:

5. Ինչպես ցանկացած համակարգ, այնպես էլ ՏԻՀ-ն ունի իր ենթահամակարգերը և այն ձևավորող տարրերը: Ելնելով այս ամենից՝ առաջարկվում է տարանջատել հետևյալ տարրերը՝ ՏԻՀ նպատակը, ՏԻՀ ռեսուրսները, ՏԻՀ ձևավորումը, ՏԻՀ արդյունքները, ժամանակը, ՏԻՀ-տնտեսություն կապը, որոնք կնպաստեն արդյունավետության առավել համապարփակ և փուլային վերլուծությանը: Սակայն, թվարկած ենթահամակարգերը փոխկապակցված կառավարման կարիք են զգում և պահանջում են ՏԻՀ-ի կառավարչական գործառույթների համախմբման և ներդաշնակեցման առանձնահատուկ մոտեցումներ, որոնք առաջարկվել է մշակել կատարողականի առանցքային ցուցիչների հենքով:

6. ՏԻՀ տնտեսական ազդեցությունը գնահատելու համար առաջարկվում է ՏԻԳ մոդելը, որը ներառում է ՏԻՀ-ի առանցքային բաղադրիչները՝ կապիտալ, աշխատուժ, գիտահետազոտական ներդրումներ, մարդկային կապիտալ, ինովացիոն ենթակառուցվածքներ, պետական աջակցություն և տեխնոլոգիական գործոն: Այստեղ հաշվիառնվել նաև այն հանգամանքը, որ ինովացիոն տնտեսությունը դինամիկ զարգացող համակարգ է, որի վրա կարող են ազդել ամենատարբեր գործոններ՝ շուկայական փոփոխություններից մինչև տեխնոլոգիական և գլոբալ քաղաքական զարգացումներ: Այսպիսի փոփոխական

միջավայրում անհրաժեշտ է գնահատել նաև այն ազդեցությունները, որոնք դուրս են մնում մոդելի հիմնական գործոններից, սակայն կարող են էականորեն փոխել տնտեսական արդյունքը: Այդ նպատակով մոդելի ընդլայնված տարբերակում առաջարկվել է նաև ներառել պատահական գործոնը՝ e^{ε}\varepsilon/, որն արտացոլում է չկանխատեսված շուկայական տատանումները, տնտեսական ճգնաժամերը, տեխնոլոգիական նորամուծությունները կամ այլ արտառոց իրավիճակները, որոնք որոշիչ ազդեցություն են գործում ՏԻՀ-երի գործունեության գծով կառավարչական որոշումներ կայացնելիս:

7. Տարածքային ինովացիոն համակարգի կառավարման գործընթացը պահանջում է գործողությունների արդյունքային չափելիություն: Ընդ որում, կառավարման նման արդյունքները դրսևորվում են նպատակադրման, կազմակերպման, վերահսկողության և շահադրդման գործառույթներում: Հետևաբար, տարածքային ինովացիոն համակարգի զարգացումների նպաստման գծով անհրաժեշտություն է առաջանում կառավարչական որոշումները կայացնել վերոնշյալ գործառույթների կտրվածքով, որն առաջարկվում է իրականացնել կատարողականի առանցքային ցուցիչներով: Ընդ որում, այդ ցուցիչները կառավարչական գործառույթների արդյունավետությունը գնահատելիս կիրառվում են ֆինանսական և ոչ ֆինանսական, իրավաօրենսդրական և կազմակերպչական խմբավորումներով, որով ՏԻՀ-երի գործունեության արդյունքների գնահատման համապարփակ մոտեցում է ցուցաբերվում:

8. Առաջարկվել է ՏԻՀ զարգացման հնարավորությունների համընդհանուր ցուցիչ, որը ձևավորվում է մարզային ինովացիոն համակարգին աջակցող կատարողականի ենթացուցիչների հիման վրա՝ հաշվի առնելով ռեսուրսային և կազմակերպչաիրավական գործոնների համախումբը: Դրանով իսկ հնարավորություն է ստեղծվում չափելի դարձնելու ՏԻՀ-երի գործունեությանը նպաստող բազմաբնույթ գործոնների ազդեցությունը և գնահատելու այդ ուղղությամբ իրականացված կառավարչական գործառույթների արդյունավետությունը: Բացի այդ, առաջարկվող (Ip) ցուցիչը կառավարման համակարգում միայն վերահսկողական դերակատարում չի ստանձնում, այլև կառավարման առանձին գործառույթների միջև իր ենթացուցիչների բաշխումով հնարավորություն է ստեղծում բացահայտելու տարածքային ինովացիոն համակարգի զարգացման ռիսկային խոչընդոտները: Տարածաշրջանային ինովացիոն համակարգի կառավարումը առաջակվող կատարողականի առանցքային ցուցիչներով հնարավորություն է ընձեռնում մի կողմից ապահովելու ՏԻՀ-երի գործունեության աջակցող գործառույթների արդյունքային պարբերական չափելիություն, մյուս կողմից, դրա հիման վրա

կայացնելու մարզային ինովացիոն գործունեության առաջընթացին նպաստող համապատասխան կառավարչական որոշումներ:

9. Կատարողականի առանցքային ցուցիչներով ՏԻՀ-երի կառավարչական գործառույթներն առաջարկվում է իրականացնել դինամիկ մոտեցմամբ, կիրառելով փուլային հետևյալ պարբերաշրջանը.

Առաջին փուլ. ՏԻՀ-երի զարգացման նպատակադրումների ներուժի բնութագրում ԿԱՑ-երով, արձանագրելով տարածքային ինովացիաների գեներացման և իրացման ռեսուրսային ու կազմակերպչական կարողությունների հասանելիության թիրախները:

Երկրորդ փուլ. տարածքային ինովացիոն համակարգի գործունեությանը նպաստող գործոնների գծով ենթացուցիչների սահմանում և դրանց հիման վրա ՏԻՀ զարգացման հնարավորությունների համընդհանուր ցուցչի գնահատում:

Երրորդ փուլ. ՏԻՀ-ի զարգացման գծով սահմանված կատարողականի առանցքային ցուցիչների փոփոխման մշտադիտարկում և ինովացիաների ներդրման գործոնային խոչընդոտների բացահայտում:

Չորրորդ փուլ. ՏԻՀ-երի զարգացման ռիսկերի գնահատում և ինովացիոն գործունեության հնարավորությունների իրացման ռիսկայնության մեղմում:

Հինգերորդ փուլ. ՏԻՀ-երի գործունեության մրցակցային պայմաններից ելնելով՝սահմանված կատարողականի ցուցիչների պարբերաբար վերանայում և առաջընթացին ուղղված համապատասխան կառավարչական որոշումների ընդունում:

10. Հիմք ընդունելով ՏԻՀ ձևավորման և զարգացման միջազգային փորձը՝ ներկայացվել են այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են ՀՀ-ում կայուն և մրցունակ ՏԻՀ ստեղծելու համար. միավորել գիտատեխնիկական, գիտական, պետական և մասնավոր հատվածների ներուժը, խթանել գիտական ու արդյունաբերական կազմակերպությունների (հատկապես ՓՄՁ-ների) ինովացիոն գործունեությունը և աջակցել ինովացիոն արտադրանք թողարկող կազմակերպությունների շուկա մուտք գործելուն, ներդնել մտավոր սեփականության պաշտպանության գործուն մեխանիզմներ, ներգրավել արտաբյուջետային միջոցներ գիտատեխնիկական և ինովացիոն ծրագրերի համար (վենչուրային կապիտալ, վարկեր, մասնավոր ներդրումներ, դրամաշնորհներ և այլն), ինովացիոն ոլորտի զարգացման ներդրումներ կատարել կրթական համակարգում, նպաստել միջմարզային ակտիվ համագործակցությանը, մարզերի գիտական և արտադրական հզորությունների միավորմամբ ստեղծել մեկ միասնական համակարգ և նպաստել մարզերում գիտական կյանքի ակտիվացմանը:

Հետազոտական առանցքային վերջնարդյունքները և գիտական նորույթի մեկնաբանումները ներկայացված են ատենախոսի կողմից հրատարակված հետևյալ հոդվածներում:

1. **Սարատիկյան Նարեկ,** «Կրթական համակարգի ազդեցությունը տարածքային համաչափ զարգացման վրա», Տնտեսագիտության ժամանակակից

հիմնահարցերը, ուսանողների ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 2-րդ գիտաժողով, Երևան 2014 թ. , էջ 104-108:

2. **Սարատիկյան Նարեկ,** «Գիտության դերը տարածքային տնտեսության զարգացման մեջ», Զարգացման ժամանակակից մարտահրավերները, ՀՊՏՀ 24-րդ գիտաժողով, Երևան 2015 թ., էջ 400-405:
3. **Սարատիկյան Նարեկ,** «Բարձրագույն կրթական համակարգի զարգացման միտումները ՀՀ-ում» Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2015 թ., էջ 307-310:
4. **Սարատիկյան Նարեկ,** «Գիտելիքահենք տնտեսության էությունը և դրա առանձնահատկությունները ՀՀ-ում», Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետության մարզերում: Գիտաժողով, Եղեգնաձոր 2015 թ., էջ 35-42:
5. **Սարատիկյան Նարեկ,** «Գիտելիքահենք տնտեսության ազդեցությունը ՀՀ միգրացիոն քաղաքականության վրա», Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները: Հանրապետական գիտաժողով, Երևան 2015 թ., էջ 170-174:
6. **Սարատիկյան Նարեկ,** «Գիտելիքահենք Տնտեսության Հնարավորությունները (ՀՀ Օրինակով)», ՀՀ մարզերի տնտեսության զարգացման հիմնախնդիրները, հանրապետական գիտաժողով, 2016 թ., էջ 35-42:
7. **Սարատիկյան Նարեկ,** «Գիտելիքահենք տնտեսությունը թվերով (ՀՀ օրինակով)», Տնտեսության և հասարակության զարգացում, 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողով, Երևան 2018թ. , էջ 80-90:
8. **Սարատիկյան Նարեկ,** «Տարածքային տնտեսության զարգացման հնարավորությունները տարածքային ինովացիոն համակարգի միջոցով», Այլընտրանք գիտական հանդես #3, Երևան 2017թ., էջ 226-231:
9. **Սարատիկյան Նարեկ,** «Տարածքային ինովացիոն համակարգերի հիմնական գործոնների վերլուծություն», Կրթությունը և գիտությունը Արցախում #3-4, Երևան 2017թ., էջ 116-121:
10. **Սարատիկյան Նարեկ,** «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման ու զարգացման հեռանկարները ՀՀ-ում», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, Գիտական հոդվածների ժողովածու, հատոր 1, 2019թ., էջ 64-74:
11. **Saratikyan Narek,** «Governance of regional innovation systems through key performance indicators», Economics, Finance and Accounting, 1(15) 2025, p 154-165.
12. **Саратикян Нарек,** «Пути совершенствования управления региональной инновационной системой: применение модели Кобба-Дугласа», «Регион и мир», 2025, №3 232-237:
13. **Saratikyan Narek,** «Challenges Of Forming A Regional Innovation System In The RA», Economics, Finance and Accounting (SI-1), 188. 2025, p 154-165.

САРАТИКЯН НАРЕК ГАНДЗАПАРОВИЧ

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ РЕГИОНАЛЬНОЙ ИННОВАЦИОННОЙ СИСТЕМЫ В РА

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности
08.00.02 – “Экономика и управление народным хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 13-го февраля 2026 года в 14:00 на заседании Специализированного совета по экономике 014 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, ул. Налбандяна 128, г. Ереван, РА.

Р Е З Ю М Е

Цель и задачи исследования

Целью диссертации является анализ основных направлений формирования, развития и управления системами региональных инноваций Республики Армения на основе международного опыта.

Для достижения поставленной цели были определены следующие задачи:

- анализ и обобщение теоретико-методологических основ развития органов местного самоуправления;
- изучение международного опыта посредством сравнительного анализа моделей управления органами местного самоуправления;
- выявление основных препятствий и факторов развития органов местного самоуправления в Республике Армения;
- разработка и обоснование новых подходов к развитию и управлению органами местного самоуправления на основе ключевых показателей эффективности;
- предложение универсального показателя оценки потенциала органов местного самоуправления для реализации территориальных инноваций на основе ресурсных возможностей, а также организационно-правовых факторов.

Основные результаты исследования и научная новизна.

Научная новизна диссертации заключается в разработке новых подходов к формированию, развитию и управлению территориальной инновационной системой Республики Армения, что выражается в следующих положениях:

- предложен институциональный подход к управлению территориальными инновационными системами, учитывающий передовой международный опыт формирования региональных инновационных инфраструктур, гармоничное сотрудничество государственного и частного секторов, а также эффективное

государственное вмешательство в целях содействия территориальной инновационной деятельности;

- разработана расширенная модель многомерной оценки территориального инновационного потенциала для оценки развития местного самоуправления, которая, помимо традиционных экономических факторов (рабочая сила, капитал), включает ключевые компоненты местного самоуправления: инвестиции в исследования, человеческий капитал, инновационную инфраструктуру, государственную поддержку и технологический прогресс, что позволяет обосновать целесообразность стратегического управления территориальными инновациями;
- разработан универсальный индикатор возможностей развития местного самоуправления, основанный на ресурсных возможностях реализации территориальных инноваций, а также организационно-правовых факторах, для оценки процесса управленческих функций в цепочке генерации, организации и контроля инвестиций в территориальные инновации, а также стимулирования потребления;
- предложена модель управления территориальной инновационной системой с использованием ключевых показателей эффективности, которая позволяет, с одной стороны, обеспечить периодическую измеримость результатов вспомогательных функций деятельности органов местного самоуправления, а с другой стороны, принимать на основе территориальной инновационной деятельности соответствующие управленческие решения, способствующие прогрессу.

NAREK GANDZAPAR SARATIKYAN

THE MAIN ISSUES OF FORMATION AND DEVELOPMENT OF THE REGIONAL INNOVATION SYSTEM IN THE RA

The abstract of the dissertation is submitted for pursuing the degree of Ph.D. in Economics in the field
08.00.02 - "Economy, the economics of its spheres and control".

The defense of the dissertation will take place at 14:00 on 12th February, 2026 at the Meeting of Specialized Council 014 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia, acting at the Armenia State University of Economics. Address: 128 Nalbandyan Street, Yerevan, 0025, RA.

ABSTRACT

Research goal and objectives

The goal of the dissertation is to analyze the main directions of formation, development and management of regional innovation systems of the Republic of Armenia, based on international experience, current trends in the development of the economy of the Republic of Armenia and the peculiarities of territorial policy.

To achieve the set goal, the following tasks have been set:

- to analyze and generalize the theoretical and methodological foundations of the development of local self-government units;
- to study international experience through a comparative analysis of local self-government unit management models;
- to identify the main obstacles and development factors for the formation of local self-government units in the Republic of Armenia;
- to develop and substantiate new approaches to the development and management of local self-government units based on key performance indicators;
- to propose a universal indicator for assessing the potential of local self-government units for the implementation of territorial innovations, based on resource capabilities, as well as organizational and legal factors.

Main results of the research and scientific novelty.

The scientific novelty of the dissertation is the development of new approaches to the formation, development and management of the regional innovation system of the Republic of Armenia, which is expressed in the following provisions:

- an institutional approach to the management of regional innovation systems is proposed, taking into account international advanced experience in the formation of regional innovation infrastructures, harmonious cooperation between the public and private sectors, as well as effective state policy intervention to promote territorial innovation activities;

- an extended model for the multidimensional assessment of territorial innovation potential has been developed for the assessment of local government development, which, in addition to traditional economic factors (labor force, capital), includes key components of local government: research investments, human capital, innovation infrastructure, state support and technological progress, making it possible to substantiate the expediency of regional innovation strategic management;
- a universal indicator of local government development opportunities has been developed, based on resource capabilities for the implementation of regional innovations, as well as organizational and legal factors, to assess the process of managerial functions in the chain of generation, organization and control of investment of regional innovations, as well as consumption promotion;
- a management of the regional innovation system with key performance indicators has been proposed, which allows, on the one hand, to ensure the periodic measurability of the results of the supporting functions of local government activities, and, on the other hand, to make a decision on the basis of regional innovation activities. Appropriate management decisions that contribute to progress.